

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի նախաձեռնությամբ և պատվերով, Չեխոսլովակիայից ստացվեց մի մեծ երգեհոն, 62 ռեգիստրանոց՝ իբրև նվեր մայրաքաղաքիս ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճին:

Երգեհոնը արժել է 46.000 դոլար, որի մեկ քառորդը տրամադրել է Վեհափառ Հայրապետը՝ Մայր Աթոռի միջոցներից, իսկ մնացած գումարը գոյացել է՝ հանգանակությամբ Եվրոպայում և Մերձավոր Արևելքում, գլխավոր նվիրատուն հանդիսանալով միանաբնակ ազգային բարերար Երվանդ Հյուսիսյանը:

Նույն պատվերով և միաժամանակ ս. Էջմիածնում ստացված են երկու փոքր երգեհոններ՝ յուրաքանչյուրը 14 ռեգիստրանոց, Մայր տաճարի և Նոր Վեհարանի համար, որոնց նվիրատուներն են՝ հանգուցյալ բարերար Հերրի Մովսիսյանը և տիար Վոլտեր Վարդանը՝ Միացյալ Նահանգներից:

Մայր Աթոռս իր հարգալիր շնորհակալությունն է հայտնում նվիրատու բոլոր ազնվասիրտ ազգայիններին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

7 փետրվարի 1970 թ.,
Ս. Էջմիածին